

տուրքերն զրեթէ բոլոր կալուածները, պեղած է մարդկային հողին իր ամէնէն աւելի անմատչելի ծալքերուն մէջ: Մարիթէնը ամբողջապէս ճանչնալու համար՝ պէտք է նկատել իր մէջ նաեւ բնազանցազէտը, գեղազէտ-քննադատը, դաստիարակը, քաղաքական գործիչը: Այստեղ նկատի առնուած էր միայն անոր մարդկայնապաշտութիւնը. բայց ասիկա ըլլալով զլիսաւոր առանցքը անոր ամբողջ իմաստասիրութեան, կարող է տալ մեղի յատակ ուրուագիծը անոր բազմակողմանի տաղանդին:

Դժուար է բաժնուիլ իրմէ, անգամ մը որ ծանօթացած ես այլեւս: Շուտով կը մտերմանաս իրեն, եւ առաջին վայրկեանի շփոթութիւնը՝ տեղի կու տայ սիրոյ եւ անխառն պաշտամունքի: Զարմանալի ձգողութիւն մը ունի անոր անձը, որ կ'առինքնէ, կը խանդավառէ, կը ներշնչէ: Իր կեանքը ամբողջ ներշնչարան եւ փարոս եղաւ տուայտող հողիներու, որոնք վարանումի մատնուած էին մեր դարու որոգայթալի ծանծաղուտներուն մէջ: Քանին՝ իրեն կը պարտին իրենց հաւատքը, իրենց կեանքը:

Մարիթէն խոր բացաւ իր ակօսը պատմութեան անդաստանին մէջէն, ուղիղ դէպի Աղբիւրը Լոյսին, դէպի սկիզբը եւ վախճանը մեր գոյութեան, դէպի Աստուած՝ որուն ի սպաս դրաւ ամբողջ իր կեանքը, անխոնջ փնտռելով եւ խոնարհաբար սիրելով ու պաշտելով: Որքան աւելի ըմբռնեց՝ այնքան աւելի սիրեց, որքան աւելի սիրեց՝ այնքան աւելի ըմբռնեց: Եւ իր իննըամեայ փորձառութիւնն ու վկայութիւնը մեզի կտակ ձգեց՝ իբրեւ անկորնչելի ու նուիրական ժառանգութիւն:

ՀԱՄԱԶԱՍՊ Սրկ. ԳԼԸՆՃԵԱՆ

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ

(Շաբ. տե'ս «Բազմ.» 1972, ք. 2-3, էջ 366-368)

ՈՂԲ ԺԱ.

Համբոյր ունիմ ես հաւատքի շրթներով,
Համբոյր՝ Փրկչին ոտքերուն.
Կը համբուրեմ աւետարանը խօսուն,
Համբոյր՝ սիրոյ անունով:

Ես կը խօսիմ ոչ իբրեւ մարդ հողածին,
Այլ՝ համբարձող սրբութիւն.
Աւազանէն իբրեւ ելած նորածին,
Որուն շնորհքն է մարմին:

Պէտք է ճանչնալ Աստուածութիւնն հաւատքով,
Յոյսին փարիլ անսասան.
Ու նորոգուիլ զերդ բընութիւնը դարնան,
Որ ապրի մարդը մարդով:

Առաքեալներ, մարգարէներ ինձ տուին,
Մեղքին համար թողութիւն.
Քանդակեցին, քանդակեցին սուրբ անունն
Երրորդութեան վերըստին:

Կը հոտոտէ աղօթական խունկն Աստուած,
Ծաղիկ կ'ուզէ սրբութեան.
Զղջում կ'ուզէ եւ արցունքի աւազան
Յոյսը խաչին միացած:

ՈՂԲ ԺԲ.

Լըսէ՛ քաղցրութեամբ, Աստուծոյ Որդի,
Իմ աղաչանքներս հեծեծանքով լի.
Աչքերս միշտամած եւ մերկ յոյսերէ՛
Ճանապարհորդ եմ անծանօթ երկրէ:

Լըռած երազ եմ, ձեռքդ դիր ուսիս.
Կարօտ եմ քեզի, եղբայր կանչէ դիս.
Յուսահատ օրեր կը տանին հեռու,
Սուրբի արցունք տուր լալու, ողբալու:

Լուսամուտիս վրայ խաչ դիր արիւնով,
Երգիքըս փակէ քաղցր տեսիլքով.
Այս վանքը որ սուրբ Նարեկ կոչեցին,
Թող Վերնատան պէս սրբանայ կրկին:

Դուն խաչակնքէ ճակատըս մըթին.
Նոր երանութեան դառնալ վերջստին.
Ո՛հ, դու մի՛ թողներ որ դայ սատանան,
Շրթներս պըճնելու դեղով կորցատեան:

Ղրկէ՛ Տիրամայրն օրօր կարգալու,
Նստած խշտեակիս եզերքին վըրայ.
Ըրէ՛ որ իմ նինջս երջանիկ ըլլայ.
Ձերդ Բեթղէհէմի մանկացած տըղայ:

ՈՂԲ ԺԳ.

Եթէ ուզես արեւն ափիդ մէջ առնել,
Ո՞վ կրնայ քու հըզօրութիւնդ կաշկանդել.
Մէկ Աստուած ես, մէկ բընութիւն անբաժան.
Տիեզերքներ, աստղեր՝ ոտքիդ պատուանդան:

Աղօթքներուս մէջ կը տեսնեմ, ամէն օր,
Ներկայութիւնդ դըրախտներէն ալ անդին.
Ուր որ Դուն կաս, հոն բարութիւն եւ սէր կայ,
Քեզմէ անդին՝ ոչընչութիւն ահաւոր:

Կը դաւանիմ իմ մարդկութեանս հաւատքով,
Աւետարանդ կը համբուրեմ աչքերով.
Մարդասէր ես, արեգակի պէս կիզիչ,
Ձըգէ՛ վըրաս քու ծիրանիդ հանգուցիչ:

ՈՂԲ ԺԴ.

Ճաճանչ չես լոյսի, այլ լոյսն ես ինքնին,
Վերածնող բնութիւն, կեանքի ասպաւէն.
Քեզի կը սպասեմ դերդ Սամարացին,
Տա՛ր դիս քու սրտիդ պանդոկն հոգեղէն:

Դու բազմապարզ եւ համայնից Աստուած,
Մեզ հետ կը ծընիս ամէն առաւօտ.
Երբ քեզ կը կանչենք՝ խորաններ բացած,
Կ'ուզենք որ բանաս աչքերը թախծոտ:

Ձէ լըսուած երբեք որ մեզ մոռանաս,
Դու բաշխել դիտես լոկ երջանկութիւն.
Սերունդներ ցաւով լեցուցին աշխարհս,
Դուն քեզ՝ զո՛հ ընտիր տըւիր ամէնուն:

Խոնարհէ երկիր, ահանջ դիր ինծի,
Դուն կը զգաս մեղուին տըրոփն ալ սրտի.
Քեզ շատ կարօտ եմ, հայ եմ որբացած,
Դէթ ինձ բաժին տուր սիրտն Արարատի:

ՈՂԲ ԺԵ.

Կրկին անգամ, հազար անգամ նոյն սրտով,
Նոյն խօսքերով, յաղթանակի հաւատքով,
Քեզի կու դամ՝ աւանդ յանձնել իմ հողին,
Եւ իմ վըրաս առնել փառքիդ ծիրանին:

Ա՛ռ դիս ուսիդ՝ ինչպէս հովիւ քաջարի.
Տա՛ր լեռնէ լեռ, երգովն անոյշ սըրինդի.
Գայլի նըման հետքիս վըրան է սատանն,
Խորտակէ՛, Տէր, որ իմ օրերս սրբանան:

Դուն գիտէիր զիս աստղերէն ալ առաջ,
Պիտի գայի Մարդեղութեանդ ընդառաջ.
Այսպէս էր կամքդ, այսպէս հըրաշքն Արարչիդ,
Որ զիս ծովէն հանեց իբրեւ մարդարիտ:

Հըզօր ես Դուն, աշխարհս ձեռքիդ մէջ փոշի,
Իսկ ես ի՞նչ եմ, հիւլէ մը որ տեսք չունի.
Դըպան մարդիկ իրենց մատով լուսնակին,
Բայց մընացին դարձեալ ըստրուկ հէք սրտին:

Ընդունէ՛ զիս, աշխարհէն ալ թանկ եմ ես.
Վանկ մ'աղօթքի դուն աւելի կը սիրես,
Քան բընութեան երզն ու շարժումն յարատեւ,
Քան արեւուն ճառագայթներն ոսկեթեւ:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

6

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ԼԵՈՒ ԵՒ ՀԱՎԱՏԱԳԻՐ

Գրեց

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

Պէյրուք, տպ. Սեւան, 1972, էջ 470:

Ինչ որ գրուի Սասունի եւ իր բնակիչներու մասին, անպայման դիւցազներգութեան էջեր են: Հին օրերէն այսպէս եկած հասած է մեզի: Աղբամեղէք եւ Սանասար այդ երկրին զաւակներն եղած են. յետոյ Դաւիթ եւ Մհեր կոչուած են, բայց միշտ նոյնն են. սասունցի են մինչեւ այսօր ալ: Սասունը ձգողական յատուկ ոյժ մ'ունի՝ ընթերցողին սիրտը գրաւելու համար: Ամէն երկիր այսպէս չէ: Անոր քարերն երկաթադիր տառերու կը նմանին: Հացեկացն ու Խորնի հայ մտքին կաթողիկէներն են: Լեռ մ'ունի որ Ծիրանկատար կը կոչուի. Սասունցին ուր որ ալ ծնի, սնի, ինքզինքը այդ լեռան տակ կը համարի:

Պէտք չկայ գիրքերու էջերը զարդարել անականներով, գեղեցիկ ոճեր փրձնաւել եւ տիպարներ ստեղծել: Հերոսներու եւ նահատակներու աշխարհ է: Գերեզմաններ կան՝ որ բարսիւն սրտերու կը նմանին, անուններ կան՝ որ փորագրուած խաչքարի կը նմանին, անջընջելի են. կարելի է չօչափել, համբուրել, առջեւը ծնրադրել ու երեսը խաչակնքել եւ ըսել. «Այստեղ աւերակներ կան, գերեզմաններ կան, բայց այստեղ մահ չկայ»:

Սասունն հիմա իր օրերը կապած է նաեւ օտար արեւներու հետ. բայց իր զաւակները կը նմանին Առաքելոց վանքի մազաղաթէ ձառնտիրին. չեն փոխուիր, են եւ կը մնան սասունցի:

Տարօնացին ուր որ ալ գտնուի, ամէն զաւակին հետ՝ Սասուն մը կը ծնի

իր տան մէջ, իր տղուն մէջ, իր թոռներուն մէջ:

Օր մը իրենց արագիւններն առին եւ երամովին գաղթեցին դէպի հիւսիս, հանդիպեցան Արազած լեռան եւ անոր լանջերուն վրայ բոյն դրին, եւ մնացին դարձեալ սասունցի: Անբեւոյթ կարմիր երիզ մը կապած է Արազածը Ծիրանկատարին. նոյն մարդիկն են՝ ծեր ու պառաւ, երիտասարդ ու պարմանուհի, տղայ եւ նորածին, նոյն լեզուն կը խօսին: Արազածի ժայռերէն ալ հիմա նոր սասունցիներ կը շինեն. ստեղծող արուեստագէտը դարձեալ սասունցի է: Լեռներու բարձունքին, ժայռերու մէջ ծնած մարդիկ, անփոփոխ սիրտ կ'ունենան, կարծր դէմք, հուժկու բազուկներ, բայց բարի հոգի մը՝ որ Աստուծոյ կը նմանի: Այս սրտերն իրենց հետ տարին՝ երբ Հայաստան դադարէ: Հոն ալ գաան Սասունի ժայռերը, քարերը, լեռներն ու բարութիւնը. Ծիրանկատարին տեղ Արազածին նայեցան, փառք տուին Աստուծոյ, դիչերն հանգիստ քնացան: Հոն ալ կանգնեցին իրենց քարէ հերոսները, Անդրանիկն ու Քեռին, Սերոբ Աղբիւրն ու Գէորդ Չաւուշը, Մուրատն ու Հրայրը. ամէն տնուոր նահատակի մը անունն առաւ. նահատակ ու հերոս հանգիստ նստեցան գիւղացիներու կողքին:

Սասունցին Արազածի լանջերուն ալ իր յատուկ լեզուով կը խօսի, կարծես թէ աշխարհէն առանձնացած կ'ապրի, իր ուրոյն բարքերով ու մտայնութեամբ:

Սիմոն Սիմոնեանն ալ սասունցի է, իր զաւակն ալ սասունցի է, իր թոռը եւ թոռան թոռն ալ սասունցի պիտի մընան. ճակատագրական գեղեցիկ բան է այդ աշխարհին զաւակն ըլլալ: Աշխարհիս ո'ր ծայրն ալ ծնին ու սնին, սասունցին միշտ սասունցի է: